

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.6-Մ2-11 Գլխավոր մասնագետ(2024-02-27)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչություն | Հաշվառման-քննական ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժին | Գլխավոր մասնագետ, (27-33.6-Մ2-11)

1.2 Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Իսակովի պողոտա 9:

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառնություններ, Իրավունքները, Պարտականությունները

- իրականացնում է Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժինների ներկայացրած հաշվետվությունների հիման վրա հաշվետվությունների կազմման և արդյունքների վերլուծության աշխատանքները.
- իրականացնում է օտարերկրյա պետությունների նմանատիպ գործառնությունների հետ համագործակցության, անհրաժեշտ տեղեկատվության ստացման և տրամադրման աշխատանքները.
- իրականացնում է հատուկ հաշվառման ձևաթղթերի, հաշվառման համարանիշերի ստացման, պահեստավորման, պահպանման, Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժիններին տրամադրման, համարանիշերի հատկացման գործընթացների իրականացման նկատմամբ հսկողության աշխատանքները.
- իրականացնում է Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժիններին գործնական և մեթոդական օգնության ցուցաբերման աշխատանքները.
- իրականացնում է Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժինների կողմից կայացված վարչական ակտերի վերաբերյալ վերադասության կարգով բերված բողոքների քննարկման աշխատանքները.
- իրականացնում է Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժինների համար ձեռք բերվելիք ապրանքների համար տեխնիկական բնութագրերի կազմման, տեխնիկական բնութագրի պահանջներին մատակարարված ապրանքների համապատասխանության ստուգման աշխատանքները.
- իրականացնում է Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժիններում համարանիշերի ոչնչացման արդյունքում կուտակված (հանձնված) ջարդոնի քանակի հաշվարկման և դրա իրացման կազմակերպման աշխատանքները.
- իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային հանձնաժողովների աշխատանքներին մասնակցությունը.
- իրականացնում է հաշվառման տվյալների փոփոխությամբ տրանսպորտային միջոցների վերասարքավորման և առանց թույլտվության վերասարքավորված տրանսպորտային միջոցների վերահաշվառման թույլտվության (բացառությամբ թափքը կամ հենասարքը համապատասխանաբար նույն եզրաչափերով թափքով կամ հենասարքով կամ շարժիչը նույն տեխնիկական բնութագրերով շարժիչով կամ տրանսպորտային միջոցի գույնը փոփոխելու դեպքերի) տրամադրման աշխատանքները.
- իրականացնում է տրանսպորտային միջոցների համարանիշերի հատկացման գների սահմանման մասին առաջարկների ներկայացման աշխատանքները.

Իրավունքները.

- Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժիններից պահանջել և ստանալ հաշվետվություններ.
- Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր վարչական ակտերի վերաբերյալ.
- պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկատվություն և նյութեր Բաժնի գործառնությունների բխող աշխատանքների բարելավման համար Նախարարության այլ կառուցվածքային ստորաբաժանումներից, Նախարարության ենթակա մարմիններից, այլ պետական մարմիններից և ծառայություններից.
- Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն համարանիշերի ոչնչացման արդյունքում կուտակված (հանձնված) ջարդոնի քանակի հաշվարկման վերաբերյալ.
- մասնակցել հաշվառման-քննական ծառայությունների մատուցման գործունեության արդյունավետության բարձրացման և տեխնիկական հագեցվածության կատարելագործման վերաբերյալ Նախարարության այլ կառուցվածքային ստորաբաժանումների, Նախարարության ենթակա մարմինների, այլ պետական մարմինների, ծառայությունների և կազմակերպությունների (այդ թվում՝ օտարերկրյա) կողմից անցկացվող միջոցառումներին, խորհրդակցություններին, աշխատանքային հանդիպումներին և քննարկումներին.
- Բաժնի գործառնություններից բխող աշխատանքների իրականացման համար համագործակցել Նախարարության այլ կառուցվածքային ստորաբաժանումների, Նախարարության ենթակա մարմինների, այլ պետական մարմինների, այլ պետական մարմինների, ծառայությունների, ինչպես նաև օտարերկրյա համանման գործառնություններ իրականացնող մարմինների հետ.
- ներկայացնել առաջարկություններ Բաժնի պետին հաշվառման-քննական ծառայությունների մատուցման գործունեության արդյունավետության բարձրացման և տեխնիկական հագեցվածության կատարելագործման վերաբերյալ.
- որպես անդամ կամ մասնագետ ներգրավվել տարբեր հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում:

Պարտականությունները.

- ստուգել և Բաժնի պետին ներկայացնել տեղեկատվություն հատուկ հաշվառման ձևաթղթերի, հաշվառման համարանիշերի ստացման, պահեստավորման, պահպանման, Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժիններին տրամադրման, համարանիշերի հատկացման գործընթացների վերաբերյալ.
- ուսումնասիրել և ամփոփել Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժինների ներկայացրած հաշվետվությունները.
- ցուցաբերել գործնական և մեթոդական օգնություն Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժիններին.
- կազմել Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժինների համար ձեռք բերվելիք ապրանքների համար տեխնիկական բնութագրերը, ստուգել մատակարարված ապրանքների համապատասխանությունը տեխնիկական բնութագրի պահանջներին.
- հաշվարկել Երևանի և մարզային հաշվառման-քննական բաժիններում ոչնչացման արդյունքում կուտակված (հանձնված) համարանիշերի ջարդոնի քանակը, մշակել և ներկայացնել առաջարկություններ Բաժնի պետին դրա իրացման կազմակերպման աշխատանքների վերաբերյալ.
- հաշվառել և Բաժնի պետին ներկայացնել հաշվառման տվյալների փոփոխությամբ տրանսպորտային միջոցների վերասարքավորման և առանց թույլտվության վերասարքավորված տրանսպորտային միջոցները.
- ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ Բաժնի պետին տրանսպորտային միջոցների համարանիշերի հատկացման գների սահմանման վերաբերյալ.
- ներկայանալ Հայաստանի Հանրապետությունում կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցությային հանձնաժողովների աշխատանքներին:

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 - Խնդրի լուծում
 - Հաշվետվությունների մշակում
 - Բարեկարքություն
 - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
 - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 - Բանակցությունների վարում
 - Փոփոխությունների կառավարում
 - Բողոքների բավարարում
 - Ժամանակի կառավարում
 - Փաստաթղթերի նախապատրաստում

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածք ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: